ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ РЕСПУБЛИКА АРМЕНИЯ REPUBLIC OF ARMENIA

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ИНФОРМАЦИОННЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОЙ АССОЦИАЦИИ ПОТРЕБИТЕЛЕЙ
INFORMATION MAGAZINE OF NATIONAL ASSOCIATION OF CONSUMERS

ՍՊԱՌՈՂ

ՍԿՍԱԾ
1997
թվականից

19 տարի Սպառողների միջազգային ասոցիացիայի (Consumers International) կազմում

ՍՊԱՌՈՂ ԱՍՈՑԻԱՑԻԱՆ 20 ՏԱՐԵԿԱՆ Է

#4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017

Հարգելի հայրենակիցներ: Ամեն տարի այս օրը հնչում են բարեմաղթանքներ ու շնորհավորանքներ մի լուսավոր հույսով, որ եկող տարին լինելու է ավելի բարեբեր ու երջանիկ, քան անցնող 365 օրերը: Ցանկանում եմ, որ յուրաքանչյուր որպեն իր հետ բերի նոր երազանք՝ հուշելով դրա իրականացման հնարավոր ելքերը:

Ինչ խոսք, հրաշալի տոն է՝ ապագայի հանդեպ հավատով ու երազանքների կատարման սպասումով: Կախարդական այս տոնը մշտապես ուղեկցվում է հաճելի պարտավորություններով, օրն առավել հեքիաթային դարձնելու մտահոգությամբ:

Առանձնակի ուզում եմ շնորհավորել հայ սպառողներին ու հայրենական արտադրողներին: Տոնական օրերին նախապատվությունը տանք հայրենական արտադրության ապրանքներին ու սննդամթերքներին, շնորհավորենք միմյանց հայկական ավանդական շամպայնով՝ արքաների գինի ու գինիների արքա համարվող խմիչքով:

Հենց այս տարի թող իրականություն դառնան, բոլոր այն իղձերը, որոնց հնարավոր է, որ սպասել եք ամբողջ մի կյանք:

Ապրեմք պատիվպան շինի Հայաստան երկրին ու հայ ժողովրդին:
Շնորհավոր Ամանոր ու Սուրբ Ծնունդ:

Մելիտա Հակոբյան
Սպառողների ազգային ասոցիացիայի,
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ նախագահ

ՍՊԱՌՈՂ
տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերական

Հիմնադիր և հրատարակիչ՝
ԱՆՆԱ Սպառողների ազգային ասոցիացիա

ՄԵԼԻՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր խմբագիր

ՍԱՄՎԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Գործադիր տնօրեն

ՆԱՐԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր

ԼԻԱ ՕՍԻՊՅԱՆ
Սննդամթերքի անվտանգության վերլուծության պատասխանատու, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԹՅԱՆ
Ասոցիացիայի փոխնախագահ, մարքեթինգի և մոնիթորինգային հետազոտությունների պատասխանատու, սննդի ապահովման ծառայությունների սերտիֆիկացման փորձագետ, սննդի որակի աուդիտոր

ՄԻԼԵՏԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ
Ասոցիացիայի փոխնախագահ, ապրանքների և ծառայությունների որակի վերլուծության պատասխանատու, քիմիկոս, որակի աուդիտոր

ԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Ասոցիացիայի արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, փորձագետ

ՀԱՍՄԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, PR մասնագետ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵԼԻՔՅԱՆ
Ասոցիացիայի գլխավոր փորձագետ, Երևանի Պետական տնտեսագիտական համալսարանի Տեխնոլոգիաների և բնական գիտությունների ամբիոնի դոցենտ, Տնտեսագիտության թեկնածու

ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ
Տեղեկատվության վերլուծության պատասխանատու, Երևանի Ագրարային համալսարանի դոցենտ

ԼԵՎՈՆ ԱՃԵՄՅԱՆ
Գյուղմթերքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու, Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի անդամ

ԺԵՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԱԻԴԱ ԻՍԿՈՅԱՆ
Իրավախորհրդատու, ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

ԱՂԱՎՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լրագրող

ՌՈՒԲԵՆ ԲՈՒԲՈՒՇՅԱՆ
Դիզայներ

ԱՐԵՎԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Լուսանկարիչ

ՍՊԱՌՈՂ
տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերականի խմբագրական խորհուրդ

ՀԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՎԻԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քիմիական և ֆիզիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ամերիկյան քիմիական ընկերության և Ամերիկյան Ֆոտոկենսաբանության ընկերության անդամ

ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Բժիշկ-ճառագայթաբան, Բժշկական գիտությունների դոկտոր

ԵՐԵՄ ՉԱԽՈՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ նախագահության անդամ

ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
Երևանի քաղաքապետի տեղակալ, Տնտեսագիտության թեկնածու

ԱՐՍԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՅԱՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՅՈՒՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Հայաստանի վաճառականների միության նախագահ

ԿԱՌԼԵՆ ԱԴԱՄՅԱՆ
ՌԴ Չափագիտության ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԱՐՄԵՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Էկոլոգոնոոսֆերայի հետազոտությունների կենտրոնի տնօրեն

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ

ԿԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԴՈՐԱ ՍԱՔՈՒԼՅԱՆ
Մոնրեալի ՄաքԳիլ համալսարանի դասախոս, դոկտոր, պրոֆեսոր

ԻՐԻՆԱ ՎԻՆՈԳՐԱԴՈՎԱ
Սպառողների ազգային ասոցիացիայի պատվավոր անդամ

ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Գրանդ Քենդի» ապրանքանիշը վաղուց արդեն դարձել է հայկական ազգային բրենդ: «Գրանդ Քենդի» ասելով՝ սպառողն այսօր հասկանում է բարձր որակ, բնական հումք, հիանալի համային հատկանիշներ և արտաքին տեսք: «Գրանդ Քենդին» Հարավային Կովկասում կակաո հատիկավոր վերամշակող միակ ձեռնարկությունն է: Ընկերության տեսականին գերազանցում է 487-ը: «Գրանդ Քենդին» տարեցտարի մեծացնում է արտահանման ծավալները՝ դրանք հասցնելով հազարավոր տոննաների: Ընկերության ողջ արտադրատեսականին սերտիֆիկացված է և համապատասխանում է որակի միջազգային ISO 9001 և ISO 22000 ստանդարտներին: Արտադրական գործընթացը մշտապես վերահսկվում է արդիական սարքավորումներով համալրված մանրէաբանական և քիմիական լաբորատորիաներում: «Գրանդ Քենդի» ընկերության հաջողության գրավականներից է պարբերաբար նոր տեխնոլոգիաների ներդրումը, հոսքագծերի և սարքավորումների արդիականացումը, բարձր որակավորմամբ մասնագետների և համախմբված կոլեկտիվի առկայությունը: Աշխատատեղերի թիվն այսօր գերազանցում է 3200-ը:

«Գրանդ Քենդին» սննդամթերք արտադրող խոշորագույն ընկերություն է, ոլորտի առաջատարը Հայաստանում:

«Գրանդ Քենդիի» կարգախոսն է. Մեր որակը մեր հպարտությունն է:

www.grandcandy.am

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԵՎ ՈՐԱԿՅԱԼԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԻՑ

ДОБРЫЙ САМАРИТЯНИН

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻ

25 տարի

Առաջարար մասամբերքի բնագավառում

Ցանկանում եմ ունենալ ինչպես Բարի Սամարացի



www.barisamaratsi.com

Մասամբերք Ձեր ընտանիքի համար

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Բարի Սամարացի» ընկերությունը հիմնադրվել է 1994 թ. գործարար Հովհաննես Հովակիմյանի կողմից: Հիմնադրման առաջին օրերից ձևավորվել են ընկերության գործելաոճն ու սկզբունքները, որոնք այսօր ավելի են կատարելագործվել անցած երկար ճանապարհին ձեռք բերած փորձի շնորհիվ:

«Բարի Սամարացի» ընկերության աշխատասեր ու բարեխիղճ աշխատակազմը պարոն Հովակիմյանի գլխավորությամբ անում է հնարավորինը, որ այժմյան տնտեսական բարդ պայմաններում իր սպառողին առաջարկի բարձրորակ, համեղ և մատչելի արտադրանք: Ընկերությունը սպառողին է ներկայացնում սննդարար երշիկեղենի ավելի քան երկու հարյուր անուն արտադրատեսակների: Արտադրանքի համային բարձր որակն ապահովվում է շնորհիվ միջազգային չափանիշներին համապատասխանող գերմանական և շվեյցարական ժամանակակից տեխնոլոգիաների:

Բարձրորակ մսամթերք արտադրելու սկզբունքը գործնականում ամրապնդելու համար ընկերությունը նախապատվությունը տալիս է փորձի փոխանակմանը, ինչի շրջանակում իրենց մասնագիտական հմտությունը փոխանցելու և նոր հաջողություններ գրանցելու համար Հայաստան են հրավիրվում արհեստավարժ մասնագետներ առաջադեմ այնպիսի երկրներից, ինչպիսիք են Գերմանիան, Շվեյցարիան, Իտալիան, Ավստրիան, Ռուսաստանը: Նաև արտադրության մասնագետներն են գործուղվում այդ երկրների լավագույն կազմակերպություններ՝ տարբեր սեմինարների, թրեյնինգների, համաժողովների մասնակցելու և տեղի մսամթերքի արտադրության նորագույն տեխնոլոգիաներին ծանոթանալու:

Մսամթերքի արտադրման ոլորտում օգտագործվում են հսկաներ համարվող մսի վերամշակման եվրոպական և ամերիկյան գերժամանակակից սարքավորումներ՝ LASKA, ALPINA, HENDELMAN, KREMER GREBE, VEMAG և այլն, որոնք որակի ապահովման բնագավառում մեծ ազդեցություն ունեն:

Ընկերության զարգացումը խթանում են միջազգային սեմինարները, EXPO-ներին մասնակցությունն ու համալիր այլ միջոցառումներ, որոնց ժամանակ ընկերությունը սպառողին ներկայանում է բարձրակարգ ու մշտապես թարմացվող նոր արտադրատեսակով:

«Բարի Սամարացի» ընկերությունը բազմիցս արժանացել է մրցանակների, որոնցից են «Գրան Պրի Առևտրի Առաջատար»-2008-2011 թթ., Gellup International Լավագույն մսամթերք արտադրող ընկերություն»-2013, 2014 թթ., ԱՊՀ երկրների մրցանակաբաշխության բարձրագույն «Դափնեկիր»-2011 թ., Սպառողների ազգային ասոցիացիայի «Ոսկեզօծ մրցանակ 25-ամյակ», Ստանդարտացման բնագավառում «Ոսկե մրցանակ»-2015, 2016 թթ., «Երկրները մեկ հարկի տակ»-2015 թ., «Տարվա լավագույն ապրանքանիշ»-2011-2017 թթ., «Միջազգային Ստանդարտների ներդրման բնագավառում»-2017 թ., «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում» - 2017 թ.:

ՉԱՆԱԽ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կաթնամթերքի արտադրության ոլորտում հաստատուն տեղ ունի «Չանախ» ընկերությունը, որն արտադրում է սննդարար և առողջարար կաթնամթերքի մեծ տեսականի, այդ թվում՝ մածուն, կաթնաշոռ, կաթ, թան, թթվասեր, որոնք բոլորն էլ համապատասխանում են Ստանդարտների ազգային ինստիտուտի սերտիֆիկացման և լաբորատոր փորձաքննության չափանիշներին:

«Չանախ» ընկերությունն արտադրում է նաև «Նանե» ապրանքանիշով ացիդոֆիլային մածունը, որի բիֆիդոբակտերիաները, բացառիկ կենսունակության շնորհիվ, կենդանի են մնում ստամոքսի թթվային միջավայրում՝ վերականգնելով աղիների միկրոֆլորան: «Նանեն» բարձրացնում է իմունիտետը, նպաստում նյութափոխանակությանը և օրգանիզմի բնականոն մաքրմանը:

Այս ընկերությունն արտադրում է նաև կեֆիր, որը կարգավորում է ստամոքսի աշխատանքը և օգտակար է հատկապես երեխաներին: Ի դեպ, մանկական սպառողական շուկային են ուղղված հատկապես «Անուշիկ» ապրանքանիշով մածունն ու թթվասերը:

Վերջին շրջանում հայրենական շուկան համալրվել է նաև «Չանախ» ընկերության կողմից արտադրվող նոր՝ տարբեր յուղայնությամբ կաթնաշոռերով և հերմետիկ փաթեթավորմամբ կաթով:

«Չանախ» ընկերության արտադրամասերում խստորեն պահպանվում են սանիտարահիգիենիկ պայմանները: Արտադրամասերն ապահովված են ցերեկային լուսավորությամբ, չափիչ կշեռքներով, օդափոխիչ ու անվտանգության համակարգերով, հրդեհաշիջման սարքերով, տեղադրված են տեսախցիկներ:

Լաբորատորիան հագեցած է համապատասխան սարքավորումներով՝ նախատեսված արտադրվող կաթնամթերքի յուղայնությունը, խտությունը, սպիտակուցների քանակը, յուղազուրկ չոր նյութերը, ջրի տոկոսը և ջերմաստիճանը ստուգելու համար:

ԵԹԵ ՉԱՆԱԽ Է,
ՈՒՐԵՄՆ ՈՐԱԿ Է :
ԾՈՐՈՒՅԹ
ԿԱԹ
3.2%
MILK
pasteurized
1%
1%
ՉԱՆԱԽ
ТВОРОГ
ОБЕЗЖИРЕННЫЙ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԹՆԱՏՈՒ ՄԹՆՈՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲԵԿՈՆ

ՄՍԱՄԹԵՐՔ

Ինչ տպիրած փեսակների

Լավագույնս եվրոպական արտադրանք

ДОБРЕНО МЯСНЫМ СОЮЗОМ РОССИИ

info@bacon.am, www.bacon.am

ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Բեկոն Պրոդուկտ» ընկերությունը 22 տարի իրականացնում է մսամթերքի և կիսաֆաբրիկատների արտադրություն:

200-ից ավելի աշխատակիցների համախմբված ջանքերի շնորհիվ՝ ընկերությանը հաջողվում է փոփոխվող տնտեսական պայմաններում պահպանել հաստատուն որակ, գրավել նոր շուկաներ, ստեղծել մսամթերքի նոր, բարձրակարգ տեսակներ: Ընկերության առաքելությունն է ստեղծել բարձրակարգ մսամթերք՝ համատեղելով ընտանեկան ձեռնարկատիրության հոգատարությունն ու ջերմությունը և արդյունաբերական արտադրության ճշգրտությունն ու մասշտաբը:

Գործունեությունը սկսելով փոքր արտադրամասում՝ այժմ այն գործում է ժամանակակից, միջազգային ստանդարտներին համապատասխան մասնաշենքում՝ համալրված Schaller ընկերության բարձրորակ հոսքագծերով: Դեռևս 2012 թվականից ընկերությունն ամեն շաբաթ կազմակերպում է էքսկուրսիաներ՝ այցելուներին հնարավորություն տալով մոտիկից ծանոթանալու մսամթերքի արտադրության ողջ գործընթացին:

«Բեկոն Պրոդուկտ» ընկերությունն առանձնանում է ներքին խստապահանջությամբ, շարունակաբար հանդես է գալիս նորարարություններով՝ սպառողին ներկայացնելով բարձրակարգ մսամթերքի տեսականի:

ՍԱՆ ՖՈՒԴ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱՆ ՖՈՒԴ ընկերությունը գործում է 2009 թ.-ից: Այս տարիներին նա հասցրել է առաջատար տեղ զբաղեցնել սփրեդ և յուղ արտադրող հայաստանյան ընկերությունների շարքում: ՍԱՆ ՖՈՒԴ-ը շուկայում հայտնի է Империя Вкуса և Царское ապրանքային նշաններով հալած յուղերով (խառնուրդներ):

Ընկերության հաջողություններն արդյունք են արտադրության, մարքեթինգի և վաճառքի ճիշտ կազմակերպման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ու բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավվածության:

Империя Вкуса ապրանքանիշով հայտնի յուղը կարելի է օգտագործել և տապակելու, և թխելու, և արդեն պատրաստի սննդին ավելացնելու նպատակով: Այս բարձրորակ արտադրանքը, պատրաստված է բացառապես բնական բուսական ճարպերից և յուղերից, չի պարունակում պահածոյացնող նյութեր ու խոլեստերին, հետևաբար թույլատրելի է օգտագործելը և դիետիկ սննդում, և պասի շրջանում:

ՍԱՆ ՖՈՒԴ ընկերության գործունեությունը գնահատվել է բազմիցս: Նա մասնակցել է ArmeniaEXPO 2011-ին և 2014-ին, պարգևատրվել Ոսկե մեդալով Царское ապրանքանիշով թողարկվող արտադրանքի որակի համար:

Վերջերս ՍԱՆ ՖՈՒԴ ընկերություն կատարած այցելության ընթացքում Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ Մելիտա Հակոբյանը և սննդի որակի փորձագետ Ռոզալիա Ավանեսյանը հնարավորություն ունեցան ծանոթանալու արտադրության ընթացքին, սանիտարահիգիենիկ նորմերին, դիզայնի և փաթեթավորման գործընթացին: Վերջում Ասոցիացիայի կողմից ամփոփվեցին արդյունքները՝ համաձայն որոնց.

- արտադրանքի որակը համապատասխանում է միջազգային չափանիշներին,
- տրանսճարպերի առկայությունը մինչև 2 % է, ինչը ևս համապատասխանում է միջազգային չափանիշներին,
- արտադրությունը լիովին մեքենայացված է, ինչը նվազագույնի է հասցնում մարդկային գործոնը,
- փաթեթավորումը համապատասխանում է ընդունված պահանջներին, պատրաստված է էկոլոգիապես անվնաս նյութերից, պահպանում է սննդի անվտանգությունն ու որակը, հուսալիորեն պաշտպանում է շրջակա միջավայրի անցանկալի ազդեցությունից,
- մակնշումը պարզ է, ընթեռնելի, թարգմանված մի քանի լեզուներով:

ՍԱՆ ՖՈՒԴ ընկերությունը 2017 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայաստանի բոլոր խանութներում անցկացրել է պրոմոակցիաներ, որոնց ժամանակ սպառողներին են բաժանվել նմուշներ արտադրանքից, ինչի արդյունքում հաստատվել է արտադրանքի բարձր որակը, քանի որ սպառողները համտեսից հետո շտապել են գնումներ կատարելու:

Հալած յուղը չափազանց արժեքավոր սննդամթերք է, որն ունի դարերի պատմություն: Նրա ողջամիտ և ճշգրիտ կիրառումը կարող է բացել գաստրոնոմիական լայն հորիզոններ՝ միաժամանակ նպաստելով թե մեծերի, թե երեխաների առողջությանը բարձր էներգետիկ արժեքով և վիտամինների պարունակությամբ: Հալած յուղի չափավոր օգտագործումը կանխում է օստեոպորոզը և ռախիտը, ունի բարերար ազդեցություն մետաբոլիկ գործընթացների վրա, նաև օգնում է պահպանել տեսողությունը ցանկացած տարիքում:

Империя Вкуса
Ճաշակով մարդկանց համար

БЕЗ ХОЛЕСТЕРИНА
Империя вкуса
ТОПЛЕНОЕ МАСЛО
ИВ
БЕЗ ХОЛЕСТЕРИНА
Империя вкуса
ТОПЛЕНОЕ
650г
ИВ
БЕЗ ХОЛЕСТЕРИНА
Империя вкуса
ТОПЛЕНОЕ
ИВ
БЕЗ ХОЛЕСТЕРИНА
Империя вкуса
ТОПЛЕНОЕ
400г
ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԵՎ ՈՐԱԿՅԱԼԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԻՑ

ԱԹԵՆՔ

ՍԿՍԱԾ 1993

ՄԱՄԱԹԵՐՔ

Որակը սկսվում է կարգապահությունից

ԱԿՊԱՏՅԻՆԸ ԵՎ ՈՐԱԿՅԱՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԻՑ

www.atenk.am
info@atenk.am

ԱԹԵՆՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Աթենք» ընկերությունը հիմնադրվել է 1993 թ. «Հայր և որդի Երիցյաններ» ընկերության կողմից: Սկսելով 3 տեսակի երշիկի արտադրությունից՝ ընկերությունն աստիճանաբար ավելացրել է թե՛ տեսականին, թե՛ արտադրության ծավալները:

2009 թվականին գործարանի սեփականատերեր են դառնում Ադամյան եղբայրները, կատարվում են լուրջ ներդրումներ, ձեռք բերվում՝ եվրոպական ժամանակակից սարքավորումներ և ավելացվում՝ արտադրական հզորությունները: Այսօր արդեն «Աթենքը» շուկայում ներկայանում է ավելի քան 200 ապրանքատեսակով: Ընկերության հմուտ տեխնոլոգների շնորհիվ՝ այստեղ միահյուսվում են ավանդականն ու ժամանակակիցը, եվրոպականն ու ազգայինը, և արդյունքում սպառողին է հասնում հրաշալի ու միայն այս ապրանքանիշին բնորոշ համով մսամթերք:

Հիմնադրման օրվանից «Աթենք» ընկերությունը նպատակ է ունեցել սպառողին առաջարկելու էկոլոգիապես մաքուր, բնական ու թարմ մսամթերք: Քայլելով ժամանակին համընթաց՝ ուսումնասիրվում ու ներդրվում են առավել ժամանակակից սարքավորումներ, գործարկվում՝ նորանոր հոսքագծեր: Մարքեթինգային հետազոտությունների և վերլուծությունների միջոցով կազմակերպությունն անընդհատ ծանոթանում է սպառողների պահանջներին և տվյալ շուկայի հանդեպ նրանց վերաբերմունքին ու ցանկություններին: Մեր տեխնոլոգների վերապատրաստումները և միջազգային մասնագետների հետ փորձի փոխանակումները հնարավորություն են տալիս շուկայում առանձնացնելու և ստանալու որակյալ մսամթերքին բնորոշ համը:

Հավատարիմ մնալով իր արժեքներին՝ ընկերությունը, ավանդական ու ժամանակակից տեխնոլոգիաների համադրմամբ սպառողին է ներկայացնելու անընդհատ թարմացվող լայն ապրանքատեսականի՝ ընձեռելով ընտրության մեծ հնարավորություն ողջ ընտանիքին: Գնորդին ավելի մոտ գտնվելու

համար ավելացվելու են վաճառքի կետերը, կատարելագործվելու՝ մատակարարման համակարգը հայաստանյան և արցախյան շուկայում՝ լուրջ քայլերով գրավելու համար ԱՊՀ և այլ շուկաներ:

Լինելով մսամթերքի առաջատար՝ կազմակերպությունն իր ապրանքատեսականին հասանելի է դարձրել ոչ միայն Երևանում, այլև ընդգրկել է Հայաստանի բոլոր մարզերը և Արցախը: Տվյալ գործունեությունն արդյունավետ իրականացնելու համար ստեղծվել է մատակարարման լուրջ համակարգ: Մատակարարման շղթայի ճիշտ աշխատանքն ամեն օր սպասարկում են առաքման բաժնի աշխատակիցները: Առաքման մեր ավտոմեքենաները զինված են մսամթերքի թարմությունը և սանիտարահիգիենիկ պայմանները պահպանող սարքավորումներով: Ապրանքը վաճառակետեր է առաքվում թարմ վիճակում: Թարմությունն ու ապրանքի տեսքի պահպանումը հոգում են մատակարարման համակարգի բոլոր աշխատակիցները: Վաճառքի պատասխանատուներն ամեն օր իրականացնում են այցելություններ վաճառքի կետեր, ստուգում ներկայացվող ապրանքի թարմությունը:

Մենք գնահատում ենք մեր յուրաքանչյուր հաճախորդին և առաջարկում միայն թարմ մսամթերք գնելու հնարավորություն:

Մենք վստահ ենք, որ «Աթենք» ընկերության հաջողությունների, բազմաթիվ ձեռնարկումների իրականացումը հնարավոր

է դառնում ընկերությանը և աշխատանքին նվիրված աշխատակիցների շնորհիվ, նրանց, ովքեր կարողանում են սիրել աշխատանքը, վերածել այն խաղի՝ գտնելով նրանում հոգեկան բավարարվածության և արժանապատվության զգացում:

Տարիների ընթացքում կարողանալով միավորել ընկերությունում բազմամյա վաստակ ունեցող մարդկանց փորձը, գիտելիքները, խորհուրդը և երիտասարդ մասնագետների եռանդն ու ներուժը՝ այսօր մենք ունենք ամուր թիմ, որի համախմբված աշխատանքից ծնվում են այնպիսի արդյունքներ, որոնց հնարավոր չի հասնել միայնակ:

Մենք չենք կարևորում աշխատանքային փորձը, մենք ցանկանում ենք, որ մեր թիմին միանան խելացի, նպատակասլաց, համառ մարդիկ, որոնք ցանկանում են դառնալ իրենց գործի իսկական մասնագետները, մարդիկ, որոնք հասկանում են, որ մեր, մեր երեխաների, մեր ժողովրդի բարօրությունը կախված է մասնագիտության նկատմամբ վերաբերմունքից:

ՑԱՐԻՑԻՆՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Царский продукт ապրանքանիշ

«Ցարիցինո» մսամթերքի կոմբինատն իր գործունեության ոչ այնքան երկար ժամանակաշրջանում հասցրել է արժանանալ սպառողի վստահությանն ու գնահատանքին, նաև հաստատուն տեղ գրավել հանրապետությունում մսամթերք արտադրող լավագույն ընկերությունների շարքում ոչ միայն բարձր որակով, այլև արտադրության ծավալով, ինչի արդյունքում կոմբինատը հայրենական շուկայում գտնվում է լավագույն 5 արտադրողների ցանկում:

Այս ընկերությունում խստագույնս կարևորվում են ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, գիտական մոտեցումը տեխնոլոգիական պրոցեսներին, լավագույն հումքի ընտրությունը: Միջազգային չափանիշներին համապատասխան արտադրական այս հզորությունը հագեցած է գերմանական վերջին սերնդի սարքավորումներով և հոսքագծերով, իսկ արտադրամասերում իշխում է գերազանց մաքրություն: Հումքից մինչև պատրաստի արտադրանք ենթարկվում են լաբորատոր հետազոտության հավատարմագրված լաբորատորիայում: Հոսքային բաղադրիչներից մինչև պատրաստի արտադրանք գործունեությունն իրականացվում է անվտանգության համապատասխանությունը հավաստող փաստաթղթերով: Արտադրանքն իրացման ոլորտ է մտնում միայն համապատասխանության սերտիֆիկատով և հատուկ մասնագիտացած փոխադրամիջոցներով:

Ընկերության բարձրակարգ մասնագետները պարբերաբար վերապատրաստվում են Գերմանիայում, Ֆինլանդիայում, Ավստրիայում և եվրոպական այլ երկրների լավագույն ընկերություններում: «Ցարիցինոյում» մշտապես հաշվի են առնվում սպառողի նախասիրությունները, և արտադրամասում մշակվում ու կիրառվում են ընկերության Царский անվանը բնորոշ բա-ղադրատոմսեր:

Մսամթերքի տեսականին բազմազան է, այն ներառում է կիսապատրաստված, հում ապխտած, եփած երշիկներ, նրբերշիկներ, սարդելկա, շպիկաչկա, վետչինա, բաստուրմա, սուջուխ, ֆիլե, կողոսկր, պաշինա, շեյկա, խոզաճարպ, մսի տեսականի և այլն:

Մսամթերքի արտադրությունը, տեխնոլոգիական գործելակարգը և տեխնոլոգիական կենսացիկլի բոլոր փուլերն իրականացվում են ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերին, արտադրողի կողմից հաստատված տեխնոլոգիական հրահանգներին, բաղադրագրերին և այլ նորմատիվ իրավական պահանջներին համապատասխան:

Կազմակերպությունում նորմատիվ փաստաթղթերը վերահսկվում և արդիականացվում են, ընթացաստուգումները և չափումները՝ գրառվում ու պահպանվում աշխատանքային վիճակում:

Արտադրվող սննդամթերքի անվտանգության ու որակի մշտական հսկողություն իրականացնելու նպատակով Սպառողների ազգային ասոցիացիան ընտրանքային կարգով վաճառակետերից պարբերաբար գնում է տարբեր արտադրատեսակներ և անկախ լաբորատոր մարմնի միջոցով իրականացնում լաբորատոր փորձաքննություն:

Ցարիցին ՍՊԸ

ՍՍԱՄԹԵՐՔԻ ԿՈՄԲԻՆԱՏ

Царский Продукт



(010)43-27-77

www.tsarskiyvkus.am

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԵՎ ՈՐԱԿՅԱԼԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

AEG SERVICE

+ 374 10 23-93-27
+ 374 10 29-75-31
aeg@aegservice.am

Ներտնային գազասպառման համակարգերի
տեխնիկական սպասարկման
ծառայությունների մատուցում

Մեր աշխատանքը
Ձեր անվտանգության երաշխիքն է

www.aegservice.am

ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ԶԳՈՒՇԱՑԵ՛Ք, ԳԱԶ Է

Բնական գազը բոլորս օգտագործում ենք մեր բնակարաններում, որպես հարմար և մատչելի վառելիք: Մոտեցնում ես լուցկին գազայրիչին, բացում փականը և վերջ, առաջանում է ջերմային և նույնիսկ լուսային էներգիա, որը հեշտ է վերահսկել և օգտագործել: Սակայն, այս ամենի հետ միասին, շատերը մոռանում են տարրական զգուշության մասին և դրանով վտանգի ենթարկում իրենց, մտերիմների ու հարևանների կյանքը:

Բնակչության անվտանգությունը հենց այն հարցն է, որի վրա հատուկ ուշադրություն են հրավիրում «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերության աշխատակիցները՝ գազի սարքավորումներ տեղադրելիս:

Որպեսզի կապույտ վառելիքը ջերմություն ու հարմարավետություն բերի ձեր տուն, իսկ ձեր կյանքն անվտանգ լինի, անհրաժեշտ է հիշել գազի վտանգավոր հատկությունների մասին, խստորեն պահպանել գազի անվտանգության կանոնները կենցաղում, հստակ հետևել տվյալ սարքի անձնագրում նշված կանոններին և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերության աշխատակիցների ցուցումներին:

Գրեթե բոլոր արտակարգ պատահարների հիմքում մարդկային գործոնն է, ինչը, ցավոք, անկանխատեսելի է: Թունավորումից, գազի արտահոսքի հետ կապված այլ վտանգներից խուսափելու համար պետք է պարզապես առավել զգոն լինել: Ընդ որում, ձմռանը պատկերն առավել վտանգավոր է, քանի որ գազասպառողբնակիչները ջեռուցում են բնակարանները՝ շատ դեպքերում անտեսելով անվտանգության կանոնները: Ջեռուցման սեզոնին գազի անվտանգ օգտագործման նկատմամբ ուշադրությունը բարձրացնելու, ինչպես նաև կենցաղում գազօգտագործման ժամանակ դժբախտ պատահարները կանխելու նպատակով «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությունը հիշեցնում է գազ սպառողներին, որ գազի սարքերի օգտագործման ժամանակ անհրաժեշտ է անշեղորեն պահպանել անվտանգության տարրական կանոնները.

- առանց հսկողության մի՛ թողեք աշխատող բաց այրման խցով (ծխատարով) գազասարքերը և գազօջախները,
- գազասարքերի երկար շահագործման ընթացքում հաճախակի օդափոխե՛ք շինությունը,
- գազօգտագործող սարքավորումների փոխարինման կամ տեղադրման համար դիմե՛ք «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերություն,
- գազասպառման համակարգում փոփո-

Պահպանե՛ք գազից օգտվելու անվտանգության կանոնները

1-04

խություններ կատարելու համար գրավոր դիմե՛ք «Գազպրոմ Արմենիա» ընկերություն,

- հնարավորության դեպքում լոգարաններում տեղադրված ջրատաքացուցիչները տեղափոխե՛ք խոհանոց կամ դրա համար նախատեսված այլ շինություն:

Չի թույլատրվում

- էլեկտրական սնուցումից անջատել ձայնաազդանշանային անվտանգության համակարգը,
- գազասարքերի ինքնակամ փոխարինումը, նորոգումը և տեղափոխումը,
- գազօջախների օգտագործումը ջեռուցման նպատակով,
- գազօջախների վրա տեղադրել մեծ մակերեսով տարա կամ թիթեղ առանց հավելյալ տակդիրի, քանի որ փակվում է այրման համար անհրաժեշտ թթվածնի ներհոսքը՝ ավելացնելով արտանետված շմոլ գազի քանակը,
- օդատար ուղիներին միացնել ծխատար, օդաքարշ կամ օդափոխիչ, ինչպես նաև դրանք փակել լաթով, թղթով կամ այլ արհեստական միջոցներով,
- փակել օդի ներհոսքի համար նախատեսված դռան ներքևի հատվածի բացվածքը,
- ծխահեռացումն իրականացնել ծալքավոր նրբաթիթեղյա խողովակների միջոցով:

Արգելվում է օգտվել գազասարքերից, եթե.

- գազասարքն անսարք է կամ գազն այրվում է անկայուն կամ դեղնակարմրավուն մրոտ բոցով,
- չի աշխատում գազասարքի անվտանգության ինքնաշխատ համակարգը,
- ծխաօդատար համակարգում բացակայում է քարշը:

Խորհուրդ չի տրվում

- օգտվել ծխատարով ջրատաքացուցիչներից և ջեռուցման սարքերից թանձր մառախուղի, ուժեղ քամիների և տարվա առավել շոգ եղանակների ժամանակ,
- գազօջախները և ծխատարով գազասարքերն օգտագործել օդորակիչների (кондиционер) հետ համատեղ:

Անհրաժեշտ է

- ծխատարով ջրատաքացուցիչները և ջեռուցման սարքերը միացնելուց առաջ և միացնելուց 3 րոպե հետո լուցկու բոցի մոտեցման եղանակով ստուգել ծխատար ուղիներում քարշի առկայությունը,
- ծխատար ուղում քարշի բացակայության դեպքում դիմել «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերություն,
- առատ ձյուն տեղալու դեպքում հաճախակի ստուգել ծխատար խողովակի արտաքին մասի ամբողջականությունը և մաքրել գլխամասը:

Ձայնաազդանշանային անվտանգության համակարգ

Ձայնաազդանշանային անվտանգության համակարգը ձայնային ազդանշան է տալիս և փակում է գազի մուտքը բնակարան, երբ.

- առկա է շմոլ գազի 0,01 %-ի չափով կուտակում,
- առկա է մեթան գազի 1 %-ի չափով կուտակում,
- միջավայրի ջերմաստիճանը գերազանցում է 70^0 C-ը:

Ձայնաազդանշանային անվտանգության համակարգը կազմված է երկու հիմնական տարրերից.

1. Ձայնաազդանշանային սարք (ազդանշանիչ),
2. Էլեկտրամագնիսական անջատիչ կափույր:

Անվտանգության համակարգի անխափան աշխատանքի համար հարկավոր է.

- ապահովել կայուն և անընդհատ էլեկտրասնուցում,
- ազդանշանիչը պահել մաքուր վիճակում, խորհուրդ չի տրվում ազդանշանիչի իրանը մաքրել քիմիական նյութերով, այլ հարկավոր է այն թեթևակի սրբել խոնավ լաթով,
- ձայնային ազդանշանի և կափույրի կողմից գազի մուտքը բնակարան փակելու դեպքում պետք է անհապաղ օդափոխել շինությունը և զանգահարել 1-04 (արգելվում է ինքնակամ գործարկել կափույրը),
- ազդանշանիչի անսարքության դեպքում (օրինակ, երբ վառվում է նարնջագույն լույսը) անհրաժեշտ է տեղյակ պահել «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությանը կամ մատակարար կազմակերպությանը,
- ազդանշանիչի հոսանքի ծախսը կազմում է ժամում 1 Վտ, հետևաբար ամբողջ ամսվա սպառած էլեկտրաէներգիան կկազմի 0,72 կՎտ (մոտ 33 ՀՀ դրամ):

Հիշե՛ք, որ շմոլ գազի 0,4-0,5 % առկայությունը շինությունում 10-15 րոպեի ընթացքում մահացու է:

Շինություններում գազի հոտ զգալու դեպքում ԱՆՀՐԱԺԵՇՏ է.

- չծխել, չօգտվել բաց կրակից կամ կայծ առաջացնող որևէ միջոցից,
- բացել պատուհանները և օդափոխության փեղկերը,
- փակել գազասարքերի փականները,
- փակել սնող գազախողովակների վրա տեղադրված խցանային փականները,
- չմիացնել և չանջատել էլեկտրասարքավորումները,
- ընտանիքի անդամներին հանել չգազավորված տարածք և զանգահարել 1-04 վթարային շուրջօրյա ծառայություն:

Ձեր բնակարանի գազամատակարարումը կդադարեցվի, եթե.

- խոչընդոտեք ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, գազասարքի անջատման, խցանային փականի խցափակման և հոլոգրաֆիկ կնիքով կնիքման աշխատանքներին,
- պոկեք հոլոգրաֆիկ կնիքը և ինքնակամ միացնեք գազասարքը:

Ներտնային գազասպառման համակարգի պատշաճ վիճակի պահպանման համար պատասխանատվություն է կրում բաժանորդը:

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ
Հասարակայնության հետ կապերի բաժին

ՎՍՏԱՀԵՔ ՄԻԱՅՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ
AEG SERVICE
+ 374 (10) 23-93-27
+ 374 (10) 29-75-31
aeg@aegservice.am
www.aegservice.am

2018-ը հողեղեն դեղին շան ընկերակցությամբ

ԽՈՅ: Խոյը տարվանից ակնկալում է շրջադարձեր: Պարզապես պետք է համբերատար լինել: Թե կանայք, թե տղամարդիկ պարտավոր են ընդունել շան խաղի կանոնները, այն է՝ լինել զգուշավոր ու հավասարակշռված:
Շունը ֆինանսական հաղթանակներ խոստանում է միայն մի դեպքում՝ պետք է մշտապես հարգել գործընկերներին կարևորել ձեր պրոֆեսիոնալիզմը:

ՑՈՒԼ: Արդեն տարեսկզբից Ցուլը պատրաստ կլինի ստեղծագործական բուռն վերելքի, ինչին անգամ հնարավոր ֆինանսական խնդիրները չեն ստվերի: Հատկապես ապրիլին տղամարդիկ աչքի կընկնեն խիզախությամբ ու վճռականությամբ, կանայք՝ արտաքին տեսքի ցայտուն փոփոխություններով:
Հենց այս տարի հնարավոր է ունենալ այնքան սպասված ընտանեկան գեղեցիկ անկյունը:

ԵՐԿՎՈՐՅԱԿ: 2018-ը լի է անակնկալներով, որոնք ոչ շատ ուրախալի են, ոչ շատ անհանգստացնող: Հնարավոր են թեթև հիասթափություններ, նաև իրար հաջորդող սիրավեպեր:
Արդեն ապրիլին կփաստեք, որ հետևում եք թողել անհաջողություններն ու պատրաստ եք վայելելու աշխատանքային բուռն ու պայծառ վերելքը:

ԽԵՑԳԵՏԻՆ: Երազանքի հետևից գլխապատառ վազելը ոչ մի արդյունք չի տա, եթե չապավինեք տրամաբանությանն ու ողջամտությանը: Ահա այն երկու հատկանիշը, որոնք պահանջում է Դեղին շունը տղամարդկանցից:
Կանայք պետք է գիտակցեն, որ հնարավոր չէ հաճելի ու ցանկալի լինել բոլորին միաժամանակ, ուստի կհանդիպեն նախանձողներ, մրցակիցներ, անգամ թշնամիներ, որոնց դեմ մղվող պայքարում, սակայն, խեցգետին կինը ոչ մի դեպքում չի կորցնի կանացիությունը:

ԱՌՅՈՒԾ: 2018-ը մեծ հաղթանակների տարի է, որոնք կտրվեն գրեթե առանց ջանքերի, սակայն դա չի նշանակում, որ դրանք կգրանցվեն, այն ժամանակ, երբ խեցգետին տղամարդիկ բազմոցին անգործ պառկած կլինեն: Պետք չէ մոռանալ, որ ամեն բան սկսվում է աշխատանքից:
Հրաժարվեք անհաջող ու անհաջողակ ընկերներից՝ շրջապատելով ձեզ այն մարդկանցով, ումից սովորելու կամ ում սովորեցնելու բան ունեք:
Կանայք պետք է խուսափեն այն ամենից, ինչը կարող է խաթարել ընտանեկան երջանկությունը: Խոսքը մասնավորապես կրքոտ սիրավեպերի մասին է:

ԿՈՒՅՍ: 2018-ը հաջող, ոչ այնքան հարթ, բայց ընդհանուր առմամբ արդյունավետ տարի է: Շունը կսովորեցնի գնահատել այն կոլեկտիվը, որի հետ շփվում եք, նաև կօգնի գրեթե լիովին հրաժարվել բնորոշ եսասիրությունից: Այս բոլոր պահանջները կատարելով՝ հնարավոր է, որ Կույսերն ունենան մեծ եկամուտներ ու կրքոտ սեր:
Կույսերի առողջական վիճակը կախված կլինի նյարդային համակարգի վիճակից, ինչը կարգավորել հնարավոր է ներդաշնակ ու հանգիստ կենսակերպով:

ԿՇԵՌՔ: Հնարավոր է, որ այս տարին մյուսներից տարբերվի հատկապես հանդարտությամբ ու պարզությամբ, ինչին չեն խանգարի անգամ ֆինանսական խնդիրները:
Թեև 2018-ը կանցնի առանց վերելքների, սակայն փոխարենը խնդիրները ձեզ կկոփեն, ու դուք պատրաստ կլինեք հակահարված տալու բոլոր անհանգստություններին ու շնչառական հիվանդություններին:

ԿԱՐԻՃ: 2018-ը բեկումնային կլինի կյանքի բոլոր ոլորտներում: Առջևում մեծ սերն է, եկամուտների աճն ու հեղինակության ամրապնդումը:
Միակ բանը, որ այս տարի անհանգստություն կպատճառի Կարիճներին, առողջությունն է, ինչը սակայն հաղթահարելի խնդիր է:

ԱՂԵՂՆԱՎՈՐ: Դեղին շունը հովանավորում է հատկապես ստեղծագործողներին ու գիտությանը ծառայողներին:
Հակառակ սեռի համար Կարիճի գրավչությունը մի քանի անգամ կավելանա, հետևաբար տարօրինակ չէ, որ մշտապես կշրջապատվեք մարդկանցով, որոնք պատրաստ են ձեզ աջակցելու և օգնելու:
Միայնակներին տրվում է միակ շանսը երկրորդ կեսին գտնելու, ուստի հարկավոր է չափազանց ուշադիր լինել այն ձեռքից բաց չթողնելու համար:
Հատկապես մարտ ու ապրիլ ամիսներին իրականացվող նախագծերը կարժանանան բարձր գնահատականի՝ դառնալով կայուն եկամուտի աղբյուր:

ԱՅԾԵՂՋՅՈՒՐ: Տպավորություն է, որ 2018-ին անհետ կորել են բոլոր հակառակորդներն ու թշնամիները:
Միայնակներին դեռևս բուռն սիրավեպ չի սպասվում, սակայն արդեն ընտանիք ունեցողները կվայելեն իրական երջանկությունն ու ներդաշնակությունը:
Եկամուտները 2018-ին չեն ավելանա, փոխարենը կսովորեք խնայողություններ անել:
Ինչ վերաբերում է առողջությանը, ապա խոցելին ստամոքսաաղիքային տրակտի օրգաններն են:

ՋՐՀՈՍ: 2018-ին Ջրհոսը կյանքը զգալիորեն փոխելու մի քանի հիանալի հնարավորություն կունենա, ինչի բանալին տքնաջան աշխատանքն է: Որոշ Ջրհոսներ կգտնեն ուժ և ժամանակ հասնելու կարիերայի բարձունքներին, ինչն էլ կապահովի կայուն եկամուտ:

ՁՈՒԿ: Տարին խոստանում է մեծ փոփոխություններ, սակայն ամենագլխավորը թերևս լավ ինքնազգացողությունն է, որին հասնելու համար նախ պիտի հասնել հոգեկան ներդաշնակության: Միակ սիրո հետ հանդիպումը նախատեսվում է մարտ-ապրիլ ամիսներին:

ՀՀ, 0021, Երևան, Աղոնցի 10; +374 10 20-94-60; aeg@aegservice.am; www.aegservice.am

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆ ՋԵՌՈՒՅՄԱՆ ՄԵՋՈՆԻՆ

AEG SERVICE

Հարգելի բաժանորդներ,

եղե՛ք ուշադիր գազի օգտագործման ժամանակ և պահպանե՛ք անվտանգության կանոնները: Մտածե՛ք Ձեր և Ձեր ընտանիքի անդամների առողջության և անվտանգության մասին:

Մեր աշխատանքը Ձեր անվտանգության երաշխիքն է

www.armconsumer.am